10.56653/18290361-2025.16-08

Համազասպ Աբրահամյան

Հայաստանի պատմության թանգարան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
abrahamyanhamazasp@gmail.com

ԴՎԻՆԻ 9-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՍԱՐԱԿ ԽԵՑԵՂԵՆԸ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ*

Հիմնաբառեր. Դվին, հասարակ խեցեղեն, 9-րդ դար, պեղումներ, շերտագրություն, թանգարանի պեղավայր, Կենտրոնական թաղամաս

Ներածություն

9-րդ դարը համարվում է զարգացած միջնադարի խեցեգործության առաջին շրջանը, որն անցման օղակ է հանդիսանում նոր և նախորդ ժամանակաշրջանների միջև: 8-րդ դարի վերջից սկսած խեցեղենի արտադրությունը ստանում է զանգվածային բնույթ, նկատվում է կավե անոթների որոշակի ստանդարտացում: Ձևավորվում են անոթների պատրաստման և հարդարման նոր տեխնոլոգիաներ, ձևաբանական կերտվածքներ (Քալանթարյան 1975ա, 239; Հակոբյան 2025, 32–33):

Հաշվի առնելով հայ հետազոտողների կողմից ջնարակի շերտի բացակայությամբ խեցեղենը (unglazed pottery) «հասարակ» անվանելը՝ մենք նույնպես հոդվածում ներկայացված «անջնարակ» (unglazed pottery) անոթները անվանել ենք «հասարակ» (Ղաֆադարյան 1952, 184; Առաքելյան 1958, 218; Քալանթարյան 1975ա, 239; Պետրոսյան 1988, 50, Հակոբյան 2025, 27 և այլն): Միևնույն ժամանակ, ինչպես և նշված հեղինակները, մենք նույնպես ուզում ենք շեշտել, որ «հասարակ» անվանվող խեցեղենում բազմաթիվ են իրենց նրբությամբ և շքեղությամբ աչքի ընկնող օրինակները:

9-րդ դարի հասարակ խեցեղենին կրկին անդրադառնալու առիթն այս անգամ Դվին հնավայրում 2022 թվականին հետախուզական, իսկ 2023 թվականին ընդլայնված հնագիտական պեղումների իրականացումն ու դրանց արդյունքներն են: Պեղումներն իրականացվել են հնավայրի ապագա թանգարանի և հնագիտական հանգրվանի շենքի տարածքում (այսուհետ՝ թանգարանի տարածք; արշավախմբի ղեկավար պ.գ.դ., պրոֆ. Համլետ Պետրոսյան), մանրամասն հաշվետվությունները հրատարակված են «Armeniaca» ամսագրի 2-րդ և 3-րդ համարներում (Petrosyan et al. 2023, 233–241; Petrosyan et al. 2024, 254–265): Այս պեղումների ընթացքում իրականացված շերտագրական-ժամանակագրական դիտումները և 9-րդ դարի հարուստ հնագիտական նյութը հնարավորություն են տալիս նորովի

* Ստացվել է 11.08.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 27.08.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 09.12.2025 թ.:

բնութագրել նախորդ պեղումների ժամանակ հայտնաբերված և ՀՊԹ-ում պահվող համաժամանակյա դվինյան ընդարձակ խեցեգործական հավաքածուն:

Դվինի պեղավայրերից, նախքան թանգարանի տարածքի պեղումները, 9-րդ դարի շերտը որոշակիորեն սահմանազատվում էր հիմնականում Կենտրոնական թաղամասում (Քալանթարյան 1975բ, 91): 8-րդ դարի վերջից 9-րդ դարի սկիզբը Կենտրոնական թաղամասը կառուցապատվել է հում աղյուսից բնակելի-տնտեսական և արտադրական համալիրներով, որոնք ոչնչացել են 894 թվականի երկրաշարժի ժամանակ (Քալանթարյան 1979, 268; Քալանթարյան 1982ա, 60; Акопян и дрг. 2008, 12):

Շերտագրական դիտողություններ

Դվին հնավայրի գրեթե ամբողջ տարածքում փաստագրվել են 9-րդ դարի հնագիտական շերտեր կամ առարկաներ: Օրինակ՝ միջնաբերդում 10–11-րդ դարերի և 9-րդ դարի մշակութային շերտերի միջև փաստագրված մակարդակների տարբերությունն ընդամենը 0.15–0.20 մետր է, ինչը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, «որ երկրաշարժից հետո փուլ եկած շենքերի տեղը հարթեցվել և նոր կառուցապատում են կատարել գրեթե նույն մակարդակի վրա» (Քոչարյան 2019, 78): Այնուամենայնիվ, միջնաբերդի հատվածում առկա 9-րդ դարի հնագիտական շերտերը հիմնականում խաթարված են 10–13-րդ դարերում խիտ կառուցապատման և հորերի հետևանքով: Դվինում 9-րդ դարի հիմնական շերտերը պեղվել են Կենտրոնական թաղամասի տարածքում: Այստեղ կառույցները շատ վատ են պահպանվել, և դրանց հատակագծային լուծումների վերաբերյալ հնարավոր չէ ընդհանուր պատկերացում կազմել (Քալանթարյան 1975բ, 91; Քալանթարյան 1982բ, 89; Քալանթարյան 1987, 138, Ղաֆադարյան և Քալանթարյան 2002, 13; Հակոբյան 2005, 208; Акопян и дрг. 2008, 12; և այլն): Չնայած հնագիտական իրավիճակների վատ պահպանմանը՝ այստեղ շերտագրական պատկերն ուրվագծվում է բավական հստակ: Կենտրոնական թաղամասը 894 թվականի երկրաշարժից հետո շատ քիչ է կառուցապատվել, իսկ 10–13-րդ դարերի շինությունները խաթարվել են ուշ շրջանի բավականին խիտ թաղումներով (Ղաֆադարյան և Քալանթարյան 2002, 14; Քալանթարյան 1982ա, 60): Կենտրոնական թաղամասի տարբեր հատվածներում 9-րդ դարի, տեղ-տեղ նաև 8-րդ դարի շերտերի խորությունը տատանվում է 1.3–2 մետրի սահմաններում, որը ցայտուն երևում է պեղավայրի ուղղահայաց կտրվածքներում: Վերջիններս անմիջապես նստած են կաթողիկե եկեղեցու 7-րդ դարի սկզբի վերակառուցման ժամանակ առաջացած տուֆի տաշվածքի շինարարական թափոնների վրա (Քալանթարյան 1975բ, 91):

2022–2023 թվականների պեղումների արդյունքները: Դվին հնավայրի թանգարանացման և վերականգնման ծրագրի շրջանակներում նախատեսվում էր նոր թանգարանի և հնագիտական հանգրվանի կառուցում: Հաշվի առնելով քաղաքի միջնաբերդը շրջապատող ջրի խանդակների ուղությունները և մշակութային շերտերի հնարավոր բացակայությունը դրանց տեղում՝ ստուգողական պեղումներ են իրականացվել Հնաբերդ-Վերին Արտաշատ միջհամայնքային ճանապարհի աջակողմյան հատվածում՝ Կենտրոնական թաղամասի հարավային կողմում (նկ. 1):

Այս նպատակով առանձնացվել է 10 մետր երկարությամբ և 2 մետր լայնությամբ հետախուզական խրամատ: Պեղումները իրականացվել են մինչև 2.20 մետր խորություն, ինչի արդյունքում տեղում բացվել են երեք հիմնական շերտեր: Վերին հատվածում բացված առաջին շերտն ուներ 0.90–1.30 մետր հաստություն և իրենից ներկայացնում էր խառը շերտ՝ առանց հնագիտական իրավիճակների: Հաջորդ շերտը սկսվում էր խրամատի հարավային կողմից՝ 0.90 մետր խորության վրա, և շարունակվելով 7 մետր դեպի պեղավայրի հակառակ կողմը՝ ավարտվում էր 1.30 մետր խորության վրա: Այն ուներ մինչև 0.35 մետր հաստություն և իր հատկանիշներով ներկայանում էր որպես ջրատար խրամատի նստվածք: Երրորդ հիմնական հնագիտական իրավիճակներով հագեցած շերտը սկսվում էր 0.90–1.30 մետր խորության վրա և, ըստ հայտնաբերված մեծաքանակ ջնարակապատ խեցեղենի, թվագրվում էր 9-րդ դարով: Ի տարբերություն նախորդ շերտերի՝ երրորդ շերտում ունենք ֆիքսված իրավիճակներ՝ աղյուսե պատ, հատակ, հում աղյուսի հատվածներ, թափված շաղախ, տոփանված հատակ՝ մոխրի հատվածներով, ամբողջական առարկաներ (Petrosyan et al. 2023, 233, 236): Արշավախմբի նախնական եզրակացությունն այն էր, որ խանդակները ստեղծվել են 9-րդ դարից հետո՝ իրենց տակ թողնելով մինչ այդ եղած խիտ կառուցապատումը: Խրամատին նախորդած հնագիտական հորիզոններն հետազոտելու նպատակով 2023 թվականի գարնանը նույն տարածքում շարունակվել են ավելի ընդարձակ հնագիտական աշխատանքները, որոնք իրականացվել են երկու հատվածներով: Նոր ընտրված հիմնական հատվածը, որն ուներ 15×15 մետր չափերի համադրություն, իր մեջ ընդգրկում էր նաև 2022 թվականի նոյեմբերի խրամատը: Նոր հատվածն անվանել ենք A պեղավայր և բաժանել 9 քառակուսիների: Երկրորդ պեղավայրը գտնվում էր A պեղավայրից 11.5 մետր արևմուտք: Այն պայմանականորեն անվանել ենք B պեղավայր և բաժանել երկու քառակուսիների:

A և B պեղավայրերի շերտագրությունը: Ընդհանուր առմամբ երկու պեղավայրերի աշխատանքների արդյունքները թույլ են տալիս մշակութային շերտը բաժանել երեք հիմնական հնագիտական շերտերի, ինչն ամբողջությամբ համապատասխանում է 2022 թվականի հետախուզական խրամատի նախնական արդյունքներին:

Առաջին շերտը զբաղեցնում է պեղավայրի վերին հատվածը և տարբեր հատվածներում մակերեսից հաշված ունի 0.50–1.30 մետր խորություն: Շերտն իր վրա է կրում տարբեր մելորացիոն ու գյուղատնտեսական այլ աշխատանքների հետևանքները և այլ գործունեության հնագիտական վավերացումներ չեն պարունակում: Քիչ քանակությամբ առկա հնագիտական բեկորները բազմազան են և ընդգրկում են Դվին հնավայրի գրեթե բոլոր հնագիտական ժամանակաշրջանները, ինչպես նաև ժամանակակից նյութեր: Շերտը մուգ մոխրագույն է, ավազային, առկա է խիճ, խեցու բեկորներ, քարեր: **Երկրորդ շերտը** հիմնականում վավերացվել է պեղավայրի հարավային կողմում (A3, A4, A5, A8, A9; նկ. 2): Արևելյան կողմում այն ունի 4.40 մետր լայնություն, իսկ արևմտյան կողմում՝ 10 մետր: Այն սև գույնի է, մեծ քանակությամբ խճի և ավազի պարունակությամբ: Շերտում առկա է մեծ քանակությամբ տարբեր թվագրությամբ խեցեղեն, որի մեջ մեծամասնություն

են կազմում 9-րդ դարով թվագրվող ջնարակապատ և հասարակ խեցեբեկորները: Առկա են նաև ապակու բեկորներ, կենդանական ոսկորներ: Խեցեղենի և ոսկորների մեծ մասը այրված են: Պեղավայր մտնող հարթակների կտրվածքները հնարավորություն են տալիս հասկանալ այս շերտի ընդհանուր լայնությունը, որը կազմում է միջինում 12.5 մետր (Պետրոսյան և այլք 2024, 149): Շերտը իրենից ներկայացնում է ջրի նստվածք, որն ըստ նախնական դիտարկման, միջնաբերդը շրջապատող ջրի խրամատի նստվածքն է: Այս նստվածքի հաստությունը եզրային հատվածներում աստիճանաբար բարակում է և ավարտվում, իսկ կենտրոնական հատվածում շերտն ունի մինչև 0.60 մետր հաստություն (Petrosyan et al. 2024, 256–258): Թեմայի շրջանակներում արժեքավոր է **երրորդ հիմնական շերտը** (նկ. 3): Այն պեղավայրի հյուսիսային հատվածում (A1, A2, A4, A5 քառակուսիներ) երևում է 0.60 մետր խորությունից սկսած, իսկ պեղավայրի հարավային հատվածում նրա վերին շերտը քանդել է ջրամատակարարման խրամատը: Երրորդ հիմնական շերտը հարուստ է բազմաթիվ հնագիտական իրավիճակներով, որոնք իրենցից ներկայացնում են կրաշաղախով և չոր շարվածքով, գետաքարե և աղյուսաշար պատերի հատվածներ, հողաշեն հատվածներ, թրծած աղյուսով, սալաքարերով և տոփանված կավով հատակների մնացորդներ, հորեր, թոնիր, օջախ և այլն (Petrosyan et al. 2024, 258–263): Շերտը հարուստ է նաև ամբողջական ու բեկորային հասարակ և ջնարակապատ խեցեղենով, կենդանական ոսկորներով, մետաղյա ու ապակյա առարկաներով ու բեկորներով և այլն:

A և B պեղավայրերը շերտագրական առումով միմյանցից տարբերվում են միայն B պեղավայրում երկրորդ շերտի բացակայությամբ: Այսինքն ջրատար խրամատի նստվածքը զբաղեցնում է միայն A պեղավայրի հարավային կողմը, իսկ նույն պեղավայրի հյուսիսային կեսում և B պեղավայրում այն բացակայում է: Հետևաբար B պեղավայրում և A պեղավայրի հարավային կեսում 9-րդ դարի հնագիտական շերտերը, հողի մակերևույթից հաշված, սկսում են 50–90 սանտիմետր խորությունից և գտնվում են ավելի լավ վիճակում: Հիմք ընդունելով միջնաբերդը շրջապատող ջրի խրամատի նստվածքի 9-րդ դարի շերտի վրա գտնվելը՝ կարող ենք եզրակացնել, որ այս հատվածում ջրատար խրամատները անցկացվել են Դվինի 894 թվականի երկրաշարժից հետո:

Ի տարբերություն Կենտրոնական թաղամասի՝ վերջինիս հարավային կողմում գտնվող թանգարանի տարածքի պեղավայրում բացակայում են 10–13-րդ դարերի շերտերն ու ուշ շրջանի մեծ քանակությամբ խիտ թաղումները, և շերտի հաստությունը որոշ հատվածներում հասնում է մինչև 1.60 մետրի: Այստեղ պահպանվել են հողաշեն, թրծած աղյուսից, գետաքարից, կրաշաղախից հատվածներ, որոնց ընդհանուր հատակագծային պատկերը, ինչպես և Կենտրոնական թաղամասում, չի ամբողջանում (Petrosyan et al. 2024, Figure 50): Թանգարանի տարածքի պեղավայրում նաև հստակ առանձնանում է 894 թվականի երկրաշարժի շերտը: Պեղավայրի կենտրոնական հատվածում (A5 քառակուսի) 1.30 մետր խորության վրա պահպանվել է, 3.60 մետր երկարությամբ և 1.80 մետր լայնությամբ խառնված իրավիճակ, որտեղ գետաքարերի, աղյուսների թափվածքի հետ խառնված են խեցեղեն բեկորներ, շերտը պինդ է, առանց մոխրի: Նույն խորության վրա, բայց ար-

դեն A6, A7 քառակուսիների եզրային հատվածում առկա է մինչև 5 սանտիմետր հաստությամբ մոխրաշերտ (Petrosyan et al. 2024, 259–260, Figure 53)։ Ներկայացված իրավիճակները ընդգրկում են ամբողջ պեղավայրը և ցույց են տալիս 894 թվականի երկրաշարժի հետքերը։

A պեղավայրի 3-րդ հնագիտական շերտից հայտնաբերվել են մեծ քանակությամբ հիմնականում 9-րդ դարով թվագրվող հասարակ և ջնարակապատ խեցեղենի բեկորներ։ Ավելի փոքր խումբ են կազմում ամբողջական առարկաները։ Հիմնական շերտում առկա ջնարակապատ խեցեղենը թվագրվում է 9-րդ դարով և քանակական տեսանկյունից խորացմանը զուգահեռ աստիճանաբար նվազում է (Petrosyan et al. 2024, Figure 52, 59)։ 3-րդ հիմնական շերտում առկա են նաև մեծ քանակությամբ ապակու, երկաթի բեկորներ, դրամներ, ոսկորներ և այլն։ Հայտնաբերված առարկաները քանակական տեսանկյունից և բազմազանությամբ հիմնականում համապատասխանում են Կենտրոնական թաղամասի 9-րդ դարի շերտերի իրավիճակին (Акопян и дрг. 2008, 12)։

Ձևակազմական և գործառույթային քննություն

2022–2023 թվականներին թանգարանի տարածքի պեղումների արդյունքում հայտնաբերվել են մեծ քանակությամբ հասարակ խեցեղեն առարկաներ, որոնք հիմնականում կրկնում են Հայաստանի պատմության թանգարանում պահվող, Դվինի Կենտրոնական թաղամասի պեղումներից մեզ հայտնի 9-րդ դարի օրինակները։ Ամբողջական հասարակ խեցեղենի հիմնական օրինակները Կենտրոնական թաղամասում հայտնաբերվել են տարածքում առկա սենյակների մի քանի հորերից և նկուղից (Քալանթարյան 1982ա, 61; Քալանթարյան 1982բ, 90)։ A և B քառակուսիներում նկուղներ չեն պեղվել, իսկ պեղված մի քանի հորերում չեն փաստագրվել հասարակ խեցեղենի օրինակներ։ Այս պատճառով պեղավայրի հասարակ խեցեղենը գտնվում է հիմնականում բեկորային վիճակում, իսկ ամբողջական մի քանի օրինակները հայտնաբերվել են հիմնականում 1.90–2.20 մետր խորության վրա գտնվող մասամբ աղյուսաշար հատակի վրա (Petrosyan et al. 2023, Figure 56, 57)։

Պեղավայրից հայտնաբերված ամբողջական առարկաներից են երկու փոքրաչափ կարասները։ Կարասներից առաջինը հայտնաբերվել է 1.90 մետր խորության վրա (նկ. 4/1)։ Հավանական երկկանթանի կարասից պահպանվել է միայն մեկ կանթը։ Սպիտակ անգոբով պատված կարասի կանթերի հատվածում առկա է վեցակոս եզրագոտի։ Լայնաբերան կարասն ունի 0.50 մետր բարձրություն, իրանի լայնությունը 0.45 մետր է, շուրթի բացվածքը՝ 0.34 մետր, իսկ նստուկի տրամագիծը՝ 0.22 մետր։ Մյուս կարասը կարմրախեցի է։ Գտնվել է 2.10 մետր խորության վրա՝ հորիզոնական պառկած վիճակում (նկ. 4/2)։ Այն իրանի վրա ունի բարակ հյուսազարդ եզրագոտի, ևս մեկ եզրագոտի ունի շուրթի վրա։ Կարմրախեցի կարասն ունի 0.47 մետր բարձրություն, իրանի լայնությունը 0.38 մետր է, շուրթի բացվածքը՝ 0.24 մետր, իսկ նստուկի տրամագիծը՝ 0.22 մետր։ Կենտրոնական թաղամասի 9-րդ դարի շերտերից հայտնի է ամբողջական կարասի միայն մեկ օրինակ՝ ՀՊԹ 2623/32 (նկ. 4/3)։ Կարասը երկարավուն իրանով է, տափակ ոչ լայն հատա-

կով, իրանի վրա ունի վաղմիջնադարյան եղևնազարդի ոճով արված նեղ զարդագոտի, ինչպիսին առկա է նաև կարմրախեցի կարասի վրա (Ղաֆադարյան և Քալանթարյան 2002, 80)։ Կարասը չափերով ավելի մեծ է, ունի 0.82 մետր բարձրություն, իրանի լայնությունը 0.65 մետր է, շուրթի բացվածքը՝ 0.39 մետր, իսկ նստուկի տրամագիծը՝ 0.21 մետր։ Արտաշատ հնավայրի միջնադարյան շերտերում ամբողջական կարասներ չեն հայտնաբերվել (Հակոբյան 2025, 33)։

Վերոնշյալ երկու կարասների հատվածում՝ մինչև 2.20 մետր խորության վրա, հայտնաբերվել են նաև միականթ կժեր (նկ. 5), սափորներ, թեյնիկաձև ճրագ և այլն (Petrosyan et al. 2023, 240–241)։ Թեյնիկաձև ճրագները հաջորդում են վաղ միջնադարում լայն տարածում ունեցող նավակաձև ճրագներին և ի հայտ են գալիս 8–9-րդ դարերի հնագիտական շերտերում (Հակոբյան 2025, 61)։ Պեղավայրից հայտնաբերված մյուս թեյնիկաձև և տերևաձև ճրագները հայտնաբերվել են բեկորային վիճակում։

2023 թվականի հնագիտական աշխատանքների արդյունքում ավելի քիչ են հայտնաբերվել ամբողջական առարկաներ։ Բայց այստեղ արդեն հանդիպում են ձևաբանական տարատեսակ կերտվածքներով և հարդարման ձևերով խեցեղեն առարկաների բեկորներ, որոնք ունեն իրենց ամբողջական օրինակները Հայաստանի պատմության թանգարանում պահվող և Կենտրոնական թաղամասի պեղումներից հայտնաբերված ամբողջական կամ ամբողջացող առարկաների մեջ։

Հետաքրքիր օրինակ է մանրահատիկ կավից պատրաստված նրբախեցի սափորիկը (Petrosyan et al. 2024, Figure 52/2)։ Սափորիկի բարձրությունը 18 սանտիմետր է, իրանի լայնությունը՝ 10.5 սանտիմետր, շուրթի շեփորաձև բացվածքը՝ 6 սանտիմետր, իսկ նստուկի տրամագիծը՝ 8 սանտիմետր։ Պեղավայրից հայտնաբերվել են նրբախեցի անոթների տարբեր բեկորներ, որոնք ունեն իրենց զուգահեռները Կենտրոնական թաղամասից (Ղաֆադարյան և Քալանթարյան 2002, 82)։

Պեղավայրից հայտնաբերվել են նաև բազմաթիվ տարատեսակ կճուճների բեկորներ, որոնցից երկուսը մասամբ ամբողջանում են (նկ. 6)։ Երկու ամբողջացող կճուճներից էլ պահպանվել է հիմնականում վերին հատվածը։ Կճուճներից առաջինը հայտնաբերվել է A5 քառակուսուց, իսկ երկրորդը՝ A8, երկուսն էլ հայտնաբերվել են 2 մետր խորության վրա։ Գնդաձև իրանով կճուճներն ունեն երկուական կլոր կանթեր և երկուական հորիզոնական կանթեր, որոնք հարդարված են ալիքաձև ակոսազարդով։ Ալիքաձև ու ուղիղ ակոսազարդերով և շեղագիծ կետազարդով են հարդարված կճուճների իրանները։ Ընդհանուր առմամբ հասարակ խեցեղենի հավաքածուի մեջ մեծ խումբ են կազմում տարատեսակ կճուճների հորիզոնական կանթերը։ Այս կանթերն ունեն տարբեր հարդարանքներ, որոնց մեջ մեծամասնություն է կազմում ալիքաձև ակոսազարդը (օրինակ՝ ՀՊԹ 2755/37; նկ. 7/1)։ Հանդիպում են նաև միևնույն չափեր և հարդարում ունեցող, բայց կավի տարբեր երանգներով հորիզոնական կանթեր (սև, դարչնագույն, կարմիր)։ Բազմաթիվ են առանց կանթերի տարատեսակ կճուճների բեկորները, որոնց ամբողջական օրինակները դարձյալ հայտնի են Կենտրոնական թաղամասից (օրինակ՝ ՀՊԹ 2449/52)։

Բեկորային վիճակում A պեղավայրի տարածքից հայտնաբերվել են մի քանի ականջաձև ունկազարդով կճուճների բեկորներ: Հասարակ խեցեղենի այս տեսակը բնորոշ է 8–9-րդ դարերին և հետագա ժամանակաշրջաններում արդեն չի հանդիպում (Հակոբյան 2005, 210; Հակոբյան 2025, 33): Կենտրոնական թաղամասից բազմաթիվ են նման ամբողջական օրինակները (օրինակ՝ ՀՊԹ 2305/83; նկ. 7/2): Ուշագրավ է նման ունկազարդով փոքր չափի գնդաձև անոթը (նկ. 8): Անոթից պահպանվել է միայն մի հատված, բարձրությունը 8.5 սանտիմետր է, իսկ նստուկի տրամագիծը՝ 10 սմ: Հայտնաբերվել է A3 քառակուսուց՝ 2.50 մետր խորությունից: Փոքր և նրբագեղ, գնդաձև իրանով կճուճներ բազմիցս հայտնաբերվել են Կենտրոնական թաղամասում, և ըստ Ա. Քալանթարյանի՝ դրանք հավանաբար եղել են խեցեգործի արհեստանոցում դրված նմուշ, որի նմանակով պատվիրվել և պատրաստվել են մեծ անոթներ (Քալանթարյան 1987, 138):

Հետաքրքիր խումբ են կազմում լայն տրամագծով տարբեր չափերի խորը քրեղանները: Սրանք աչքի են ընկնում պսակների բազմազանությամբ և հատակների կորությամբ: Նման քրեղանների հավաքածու է հայտնաբերվել 1980 թվականին Կենտրոնական թաղամասի հորերից մեկում: Գտնված 10 քրեղաններից 7-ը եղել են ամբողջական (Քալանթարյան 1982բ, 90): Այս քրեղաններն աչքի են ընկնում լավ մշակմամբ և օգտագործվել են տնտեսական նպատակներով:

Հայտնաբերվել են նաև հաստապատ տաշտերի բեկորներ: Հնարավորինս ամբողջացող օրինակը հայտնաբերվել է A7 քառակուսուց՝ 2.10 մետր խորությունից (նկ. 9): Տաշտն ունի 0.22 մետր բարձրություն, լայնաբերան է: Անգոբապատ տաշտի լայն պսակի կենտրոնական մասով անցնում է սեպազարդ գոտի: Առկա են նաև ծորակավոր անոթների, գավաթների, աղամանների և այլ անոթների բեկորներ:

Անոթների հարդարման տեսանկյունից, բացի ներկայացված օրինակները, Դվինի 2022–2023 թվականների պեղումներից հայտնաբերվել են նաև վերադիր տարբեր զարդաձևերով բեկորներ (նկ. 10): Հետաքրքիր օրինակ է անոթի իրանի բեկորը (ՀՊԹ 1617/49): Խաղողի ողկույզի և կենաց ծառի վերադիր պատկերները մեծ տարածում ունեին 8–9-րդ դարերում և հետագայում այլևս չեն հանդիպում (Բաբաջանյան 2015, 109): Այս շարքի ամենահետաքրքիր օրինակը միականթ կուժն է (Kalantaryan et al. 2009, 139, Fig. 1): A և B պեղավայրերից հայտնաբերվել են բազմաթիվ տափակ և գնդիկավոր կոճակազարդերով անոթներ, որոնք հատուկ են միջնադարի զարգացած և ուշ փուլերի խեցանոթների հարդարանքին (Բաբաջանյան 2015, 109): Հետաքրքիր է նաև, հավանաբար, փոքր չափի լայնաբերան կարասի պահպանված շուրթի բեկորներից մեկի վրա պատկերված վերադիր ցլակերպ զարդը (նկ. 10):

Անոթների հարդարման ներկով նկարազարդման տեխնիկայի կիրառումը, 9-րդ դարի հասարակ խեցեղենի պարագայում, հիմնականում արտահայտվում է արաբատառ գրություններով և դրանք շրջապատող զարդագոտիներով: Կենտրոնական թաղամասի 9-րդ դարի տարբեր տարիների շերտերից հայտնաբերվել են մի քանի հասարակ անոթներ՝ արաբերեն արձանագրություններով (օրինակ՝ Հակոբյան 2005, 211): Այս շարքում ամենահիշարժան օրինակները 1986 թվականին

հայտնաբերված խոշոր սափորներն են, որոնց իրանի և բռնակի վրա առկա են արաբերեն արձանագրություններ (Kalantarian 1996, pl 67)։ 2023 թվականին B2 քառակուսում՝ 1.20 մետր խորությունից, հայտնաբերվել են սափորի բեկորներ, որոնց որոշ մասեր ամբողջանում են (նկ. 11)։ Ամբողջացած հատվածի վրա՝ սանրաքաշ զարդագոտուց ներքև, երևում է միատող խոշորատառ արաբերեն արձանագրությունը։ Արձանագրությունը բոլորում է սափորի իրանը և, ի տարբերություն նախորդ օրինակների, գրված է «քուֆի» կոչվող ոճով։

Թանգարանի տարածքի պեղումների արդյունքում հայտնաբերվել են նաև տարատեսակ չափերի, ձևի և հարդարման խուփեր (նկ. 12/1)։

Հասարակ խեցեղենի դասակարգման տեխնիկա-տեխնոլոգիական տեսանկյունից առկա են խեցու տարբեր գույներ՝ կաթնագույն, դեղնավուն, վարդագույն, կարմիր, դարչնագույն, մոխրագույն, սև, ընդ որում, գունավորումը կախված է թե՛ կավի ընտրությունից, թե՛ թրծումից, (Бобринский 1978; Цетлин 2012, 76–109)։ Մի շարք սափորների դեպքում անոթի մի մասը ունի աղյուսի կարմիր գույն, մյուս հատվածը սպիտակավուն է, ինչն առաջացել է հնոցում առարկաների դասավորության արդյունքում ջերմաստիճանի տարբերություններից (նկ. 5/2)։

Կենտրոնական թաղամասի հիմնականում 9-րդ դարի շերտերի պեղումներից բազմիցս հայտնաբերվել են վաղերկաթեդարյան խեցանոթներ և բեկորներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջնադարյան շերտերը (որոշ հատվածներում նաև անտիկ՝ Քոչարյան 1991, 22–25; Акопян и дрг. 2008, 129–147) նստած են անմիջապես վաղերկաթեդարյան շերտերի վրա։ 2022–2023 թվականների պեղումների արդյունքները հնարավորություն են տալիս վերանայելու նաև իրենց ձևաբանական հատկանիշներով և շերտերի խառնվածության պատճառով վաղերկաթեդարյան ժամանակաշրջանով թվագրված մի քանի խեցանոթների թվագրությունը։

Այսպիսով պեղումների ընթացքում միջնադարյան շերտերից հայտնաբերվել են մի շարք մուգ (դարչնագույն, սև) խեցիով և փայլեցմամբ անոթներ և բեկորներ, որոնք համարվել են խառնված և թվագրվել են Ք.ա. 9–8-րդ դարերով։ Այս շարքի որոշ բեկորներ իրենց վրա ունեն փորագիր զարդեր և ըստ հետազոտողների՝ «վաղ խեցեղենի այս տեսակը հայտնի է միայն Դվինից և առայժմ չի հանդիպում և ոչ մի հուշարձանում» (Ղաֆադարյան և Քալանթարյան 2002, 30)։ Օրինակ՝ 1978 թվականին 5-րդ դարի կաթողիկոսական պալատի արևմտյան թևում՝ 9-րդ դարով թվագրվող հնագիտական շերտից, հայտնաբերվել է խուփի մի բեկոր, որի վրա պատկերված է թռչուն, կտուցին՝ ձուկ (ՀՊԹ 2753/44; Ղաֆադարյան և Քալանթարյան 2002, 29)։ Բեկորի վրա պահպանվել է թռչնի կտուցն ու աչքի մի հատվածը, իսկ ձուկը՝ ամբողջությամբ (նկ. 12/2)։ Պատկերը ստացել են թրծումից հետո սուր գործիքով փորագրելու միջոցով։ Հավանական խուփի եզրագոտու վերին հատվածը նույնպես ոճավորված է, բայց արդեն թրծումից առաջ։ Ոճավորված հատվածը երկու կողմից ունի լայն ակոսազարդեր։ Ըստ Ա. Քալանթարյանի՝ բեկորի փորագիր հատվածները ծածկված են կարմիր օխրայով (Ղաֆադարյան և Քալանթարյան 2002, 30)։ Մեր կարծիքով թույլ նկատելի կարմիր հատվածները ձևավորվել են հողի տարբեր շերտերի հետ շփումից և հարդարման մաս չեն կազ-

մում: 2023 թվականին թանգարանի տարածքի պեղավայրի A7 քառակուսում՝ 1 մետր խորությունից, հայտնաբերվել է նմանատիպ խեցեբեկոր (նկ. 12/3): Այն ունի գրեթե միևնույն պատկերագրությունը, ինչը պատկերված է նախորդ խուփի բեկորի վրա՝ թռչուն, կտուցին՝ ձուկ: Բեկորը, չնայած առաջին հայացքից հիշեցնում է անոթի հատակի հատված, այնուամենայնիվ, ենթադրյալ հատակի հատվածում ունի կանթի ամրացման հետքեր, կամ դեպի վեր՝ շարունակություն, հետևաբար այս բեկորը նույնպես խուփի հատված է: Պատկերը փորագրված է միևնույն մեթոդով, իսկ խուփի շրթնամասից դեպի վերնամաս անցման եզրագոտին ոճավորված է նախորդ խուփի եզրագոտու վերին հատվածի տեխնիկայով: Ի տարբերություն Կենտրոնական թաղամասի՝ այստեղ 9-րդ դարի շերտի վերևում ավելի ուշ ժամանակների հնագիտական շերտեր չկան, որոնք կարող էին խառնել իրավիճակը: Իսկ 9-րդ դարի շերտից ներքև դեռևս չեն հայտնաբերվել վաղերկաթեղարյան շերտեր: 9-րդ դարի ջնարակապատ խեցեղենով հարուստ շերտը՝ պեղավայրի հարավային կողմում, որոշ չափով վնասել է ջրատար խրամատի հունի նստվածքը: Սակայն այս նստվածքն էլ գտնվում է միայն A պեղավայրի հարավարևելյան կողմում և չի հասնում A7 քառակուսի, որտեղից էլ հայտնաբերվել է փորագրազարդ հատակը: Հետևաբար փորագրազարդ խուփի հատվածը պետք է թվագրել 9-րդ դարով: Իսկ հաշվի առնելով տեխնիկա-տեխնոլոգիական ակնհայտ ընդհանրությունները՝ նույն ժամանակահատվածով պետք է թվագրել նաև Կենտրոնական թաղամասից հայտնաբերված խուփի բեկորը: Ընդհանուր առմամբ, Դվինի միջնադարյան հասարակ խեցեղենի որոշ տեսակների թվագրության խնդիրը շարունակում է արդիական մնալ: Դվինի վաղերկաթեդարյան խեցեղենի բացառիկ հավաքածուի ինքնատիպությունը հետազոտողներին ստիպում է այդ շարքին վերագրել նաև միջնադարյան խեցեղենի որոշ օրինակներ: Ինչպես վերոնշյալ դեպքում, հիմնականում այս շարքին են պատկանում մուգ դարչնագույն խեցիով և որոշ դեպքերում նաև փայլեցմամբ անոթները, որոնց գույնը կախված է թրծման գործընթացից (թրծում՝ առանց օդի մղման հնոցներում; Бобринский 1978, 213–223): Այս տեսանկյունից կարելի է ներկայացնել նաև տարաբնույթ հարդարանքներով և խեցու գույնով միաձև հորիզոնական բռնակները, որոնց արդեն անդրադարձել ենք վերևում: Այս անդրադարձով փորձում ենք նոր տվյալներ բերել 9-րդ դարի շերտերից հայտնաբերված հասարակ խեցեղենի նշված օրինակների թվագրության հարցի շուրջ, իսկ խնդրի վերջնական լուծման համար անհրաժեշտ են ռադիոածխածնային ու լաբորատոր նոր հետազոտություններ, որոնք և նախատեսում ենք առաջիկայում:

Շինարարական խեցեղենը: Պեղավայրից հայտնաբերված շինարարական խեցեղենն ամբողջանում է մի քանի կղմինդրների, ջրատար խողովակների, խեցեգործական կավե գլանների հատվածներով և թրծած աղյուսներով: Հայտնաբերված կղմինդրները հավանաբար պատկանում են Դվինի Մայր տաճարին և տարածվել են A և B պեղավայրերում, այնպես, ինչպես Կենտրոնական թաղամասում (նկ. 14/1): Ի տարբերություն Դվինի այլ հատվածների (Պետրոսյան և այլք 2024, 145–147)՝ A և B պեղավայրերի տարածքում ջրամատակարարման խողովակաշարեր չեն հայտնաբերվել: Պատահական վիճակում հայտնաբերված խողո-

վակների բեկորների շարքում առկա է մեկ գրեթե ամբողջական խողովակ (նկ. 14/2)։ Վերջինս հայտնաբերվել է A1 քառակուսում՝ 0.9 մետր խորությունից, և ունի պահպանված 39 սանտիմետր երկարություն և 10 սանտիմետր տրամագիծ։ Իրանի միջին հատվածում խողովակը լայնանում է և ունի 13 սանտիմետր լայնություն։ Մի կողմից ունի ելուստ, որի տրամագիծը 7 սանտիմետր է, իսկ պահպանված երկարությունը՝ 2.5 սանտիմետր։

Ի տարբերություն վաղմիջնադարյան կարմիր երանգով աչքի ընկնող և մի փոքր ավելի հաստ աղյուսների (հաստությունը 6–7 սմ)՝ Կենտրոնական թաղամասից հայտնաբերված աղյուսները ունեն հիմնականում 20–23×20–23×5 սանտիմետր չափերի համադրություն (Ղաֆադարյան և Քալանթարյան 2002, 79)։ Գրեթե նույն պատկերն է նաև թանգարանի տարածքի պեղավայրում՝ 23–24×23–24×5 սանտիմետր։

Եզրակացություններ

Վաղմիջնադարյան խեցեղենը տեխնիկա-տեխնոլոգիական և ձևաբանական ընդհանրություններ ուներ անտիկ խեցեգործական ժառանգության հետ։ 9-րդ դարից սկսած նկատվում են որոշակի փոփոխություններ խեցեգործական արտադրանքում։ Գերիշխող են դառնում ոտքի և ձեռքի, արագ և դանդաղ պտտվող դուրգերով պատրաստված խեցեղեն առարկաները։ Կաղապարներով պատրաստված անոթներին փոխարինելու են գալիս դրոշմազարդ առարկաները։ Ձևավորվում են անոթների պատրաստման և հարդարման նոր տեխնոլոգիաներ, ձևաբանական կերտվածքներ։ Խեցեղենի արտադրությունը ստանում է մասսայական բնույթ, նկատվում է կավե անոթների որոշակի ստանդարտացում։

2022–2023 թվականներին Դվին հնավայրի հարավ-արևմտյան կողմում՝ թանգարանի և հնագիտական հանգրվանի շենքի կառուցման համար առանձնացված տարածքում, իրականացվել են հնագիտական աշխատանքներ։ Պեղումների ընթացքում բացված 3-րդ հնագիտական շերտը, որն սկսվում է 0.60 մետրից (հյուսիսային հատված) մինչև 1.30 մետր խորությունից (հարավային հատված) և ունի շուրջ 1.60 մետր հաստություն, թվագրվում է 9-րդ դարով։ Հնագիտական աշխատանքները ցույց են տվել, որ 9-րդ դարում խիտ բնակեցված է եղել ոչ միայն Դվինի բուն Կենտրոնական թաղամասը, այլ նաև պարսպապատից դուրս գտնվող հարավային հատվածը։

Ի տարբերություն Կենտրոնական թաղամասի 9-րդ դարով թվագրվող հնագիտական շերտերի, Թանգարանի տարածքի պեղավայրում 9-րդ դարի հնագիտական շերտերը վնասված չեն ավելի ուշ շրջանների կառուցապատումներով և գերեզմաններով։ Հնագիտական շերտի թվագրության համար հիմք են հանդիսանում 9-րդ դարով թվագրվող ջնարակապատ խեցեղենի առկայությունն ու 894 թվականի երկրաշարժին վերաբերող ավերածության շերտերը։ 9-րդ դարով թվագրվող անխաթար շերտի առկայությունը հնարավորություն է տալիս քննության ենթարկել Հայաստանի պատմության թանգարանում պահվող 9-րդ դարի հասարակ խեցեղենի հավաքածուի վիճահարույց օրինակները։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ 1958 – Առաքելյան Բ., *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX–XIII դարերում, հատոր 1*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958:

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ 2015 – Բաբաջանյան Ա., Հայաստանի Թ–ԺԷ դդ. անջնարակ խեցեղենի հարդարման եղանակները, *Էջմիածին: Պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի*, Երևան, 2015, հատոր ՀԲ, համար Թ, 105–118:

ՀԱԿՈԲՅԱՆ 2005 – Հակոբյան Ն., Դվինի Կենտրոնական թաղամասի 1990–1993, 1999 թթ. պեղումների արդյունքները, *Հին Հայաստանի մշակույթը*, Երևան, 2005, XIII, 205–212:

ՀԱԿՈԲՅԱՆ 2025 – Հակոբյան Ն., Արտաշատի հասարակ խեցեղենը, *«Հուշարձան» գիտական հանդես*, Երևան, 2025, Հատոր ԻԳ, 27–73:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1952 – Ղաֆադարյան Կ., *Դվին քաղաքը և նրա պեղումները, հատոր 1*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ ԵՎ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ 2002 – Ղաֆադարյան Կ., Քալանթարյան Ա., Դվին 2-րդ, Դվին քաղաքը և նրա պեղումները (1973–1980 թթ.), *Հնագիտական պեղումները Հայաստանում*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, համար 20:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 1988 – Պետրոսյան Հ., *Գառնին IX–XIV դարերում*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 2024 – Պետրոսյան Հ., Հովսեփյան Ռ., Աբրահամյան Հ., Նախնական դիտողություններ Դվինի ջրամատակարարման մասին, *Ջրօգտագործման մշակույթը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը*, (խմբ.՝ Բոբոխյան Ա.Ա., Հովսեփյան Ռ.Ա.), Երևան, ԱԻԿԱ-Արմենիա, Ժամանակակից արվեստի ինստիտուտ, 2024, 143–150:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ 1975Ա – Քալանթարյան Ա., Դվինի Կենտրոնական թաղամասի IX դարի հասարակ խեցեղենը, *Պատմա-բանասիրական հանդես*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., համար 1(68), 239–247:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ 1975Բ – Քալանթարյան Ա., Դվինի 1981–1982 թթ. պեղումների հիմնական արդյունքները, *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., համար 7(391), 89–99:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ 1976 – Քալանթարյան Ա., Դվին 1-ին, Կենտրոնական թաղամասի պեղումները (1964–1970 թթ.), *Հնագիտական պեղումները Հայաստանում*, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1976, համար 13:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ 1979 – Քալանթարյան Ա., Դվինի հնագիտական արշավախմբի աշխատանքները 1977 թ., *Պատմա-բանասիրական հանդես*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, համար 2(85), 263–269:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ 1982Ա – Քալանթարյան Ա., Դվինի 1978–1979 թթ. պեղումները, *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, համար 2(470), 54–65:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ 1982Բ – Քալանթարյան Ա., Դվինի 1980 թ. պեղումների հիմնական արդյունքները, *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, համար 12(480), 87–94:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ 1987 – Քալանթարյան Ա., Դվինի արշավախմբի 1983–1984 թթ. աշխատանքների հիմնական արդյունքները, *Պատմա-բանասիրական հանդես*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, համար 1(116), 136–146:

ՔՈՉԱՐՅԱՆ 1991 – Քոչարյան Գ., Դվին 3-րդ, Դվինը անտիկ ժամանակաշրջանում, *Հնագիտական պեղումները Հայաստանում*, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1991, համար 22:

ՔՈՉԱՐՅԱՆ 2019 – Քոչարյան Գ., Դվին հնավայրի շերտագրման ճշգրտումներ՝ ըստ

2013 թ. պեղումների արդյունքների, *Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն*, Երևան, ԵՊՀ հրատ., 2019, № 2 (29), 76–83:

АКОПЯН И ДР. 2008 – Акопян Н.Г., Бабаян Ф.С., Жамкочян А.С., Калантарян А.А., Кафадарян К.К., Кочарян Г.Г., *Двин IV. Город Двин и его рацкопки*, Ереван, издательство «Гитутюн» НАН РА, 2008.

БОБРИНСКИЙ 1978 – Бобринский А.А., *Гончарство Восточной Европы. (Источники и методы изучения)*, Москва, Наука, 1978.

ЦЕТЛИН 2012 – Цетлин Ю.Б., *Древняя керамика. Теория и методы историко-культурного подхода*, Москва, ИАРАН, 2012.

KALANTARIAN 1996 – Kalantarian A., *Dvin*, *Histore et archeologie de la ville medieval*, *Civilisation du Proche-Orient*, *Hors serie*, *Volume 2*, Paris, Recherches et Publications Neuchâtel, 1996.

KALANTARYAN ET AL. 2009 – Kalantaryan A., Karakhanyan G., Melkonyan H., Petrosyan H., Hakonyan N., Babayan F., Zhamkochyan A., Nawasardyan K., Hayrapetyan A., *Armenia in the Cultural Context of East and West: Ceramics and Glass (4th – 14th centuries)*, Yerevan, NAS RA «Gitutyun» Publishing House, 2009.

PETROSYAN ET AL. 2023 – Petrosyan H., Nucciotti M., Pruno E., Squilloni L., Kirakosyan L., Vardanesova T., Cheli F., Hovhannisyan H., Abrahamyan H., Petřík J., Slavíček K., The Armenian-Italian Joint Expedition to Dvin, Report of 2022 Activities, *Armeniaca International Journal of Armenian Studies*, vol. 2 – October 2023, 193–246. DOI 10.30687/arm/9372-8175/2023/01/009.

PETROSYAN ET AL. 2024 – Petrosyan H., Nucciotti M., Pruno E., Vardanesova T., Cheli F., Squilloni L., Abrahamyan H., Kirakosyan L., Leonetti M., dall'Olio L., The Armenian-Italian Joint Expedition to Dvin, Report of 2023 Activities, *Armeniaca International Journal of Armenian Studies*, vol. 3 – October 2024, 199–268. DOI 10.30687/arm/2974-6051/2024/01/007.

Hamazasp Abrahamyan
History Museum of Armenia
Institute of Archaeology and Ethnography
abrahamyanhamazasp@gmail.com

THE 9TH-CENTURY UNGLAZED POTTERY OF DVIN: IN THE LIGHT OF NEW ARCHAEOLOGICAL RESEARCH

Keywords: Dvin, unglazed pottery, 9th century, excavations, stratigraphy, Museum excavation site, Central Quarter

The 9th century is regarded as the initial stage of the developed medieval period in pottery production, serving as a transitional link between the preceding and subsequent phases. From the late 8th century onwards, ceramic production assumed a mass-production character, accompanied by a noticeable standardization of clay vessels. New vessel manufacturing and finishing technologies emerged, along with distinct morphological types. Pottery produced on both slow- and fast-turning wheels, operated by hand or foot, became predominant, while stamped ceramics gradually replaced mould-made vessels.

In 2022–2023, archaeological excavations were carried out on the southwestern side of the Dvin archaeological site, within the area designated for constructing the museum and archaeological station buildings. The third archaeological layer uncovered during these investigations dates to the 9th century. The results demonstrate that in the 9th century, dense settlement existed within the Central Quarter of Dvin and its southern section, located beyond the city walls.

Unlike the 9th-century layers of the Central Quarter, the archaeological strata in the museum area have not been disturbed by later constructions or burials. The dating of this cultural layer is substantiated by the presence of 9th-century glazed pottery and by the destruction horizon associated with the earthquake of 894. Preserving an intact 9th-century layer offers an opportunity to re-examine disputed specimens within the 9th-century unglazed pottery assemblage currently held in the History Museum of Armenia.

Амазасп Абрамян
Исторический музей Армении
Институт археологии и этнографии
abrahamyanhamazasp@gmail.com

НЕ ГЛАЗУРОВАННАЯ КЕРАМИКА 9 ВЕКА ИЗ ДВИНА: В СВЕТЕ НОВЫХ АРХЕОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

Ключевые слова: Двин, неглазурованная керамика, 9-ый век, раскопки, стратиграфия, раскоп на территории музея, Центральный квартал

9 век рассматривается как начальный этап развитого средневековья в гончарном производстве, являющийся переходным звеном между предшествующим и последующим периодами. Начиная с конца 8-го века, керамическое производство приобретает массовый характер, наблюдается определённая стандартизация глиняной посуды. Формируются новые технологии изготовления и отделки сосудов, а также специфические морфологические типы. Преобладающим становится изготовление керамики на медленных и быстрых гончарных кругах, приводимых в движение рукой или ногой, тогда как формованные сосуды постепенно уступают место штампованным изделиям.

В 2022–2023 годах на юго-западной стороне древнего города Двин, на территории, выделенной под строительство здания музея и археологической базы, проводились археологические раскопки. Третий археологический слой, вскрытый в ходе этих работ, датируется 9 веком. Исследования показали, что в 9 веке густая застройка существовала не только в Центральном квартале Дзвина, но и в южной части, расположенной за пределами городских стен.

В отличие от слоёв 9-го века Центрального квартала, культурные напластования на территории музея не были нарушены более поздними постройками или захоронениями. Датировка слоя основана на находках глазурованной керамики 9 века, а также на горизонте разрушений, связанных с землетрясением 894 года. Сохранность непотревоженного слоя 9 века даёт возможность пересмотреть спорные образцы неглазурованной керамики этого времени, находящиеся в коллекции Исторического музея Армении.